

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 դեկտեմբերի 2000 թվականի N 900
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՔՍԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻՑ ՆՇՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՐՁԱՆՄՈՒՇՆԵՐ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 122 հոդվածի 11-րդ կետին համապատասխան՝
Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է:

- Հաստատել մաքսային ձևակերպումների նպատակով ապրանքներից նմուշներ և փորձանմուշներ վերցնելու կարգը (կցվում է):
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2001 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

Հաստատված է
«Հ կառավարության 2000 թվականի
դեկտեմբերի 31-ի N 900 որոշմամբ»

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՔՍԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻՑ ՆՄՈՒՇՆԵՐ ԵՎ ՓՈՐՁԱՆՄՈՒՇՆԵՐ ՎԵՐՑՆԵԼՈՒ

1. Սույն կարգը սահմանում է մաքսային ձևակերպման ժամանակ համապատասխան հսկողության իրականացման նպատակով օրենքով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներից նմուշներ և փորձանմուշներ վերցնելու կարգը:

2. Ապրանքներից նմուշներ և փորձանմուշներ վերցնել կարող են այդ ապրանքների նկատմամբ օրենքով բավարար իրավունք ունեցող անձինք և նրանց կամ համապատասխան իրավասու մարմինների լիազոր ներկայացուցիչները՝ մաքսային մարմինների թույլտվությամբ:

3. Նմուշները և փորձանմուշները վերցվում են ապրանքների նկատմամբ օրենքով բավարար իրավունք ունեցող անձանց կամ նրանց լիազոր ներկայացուցիչների ներկայությամբ և մաքսային մարմինների պաշտոնատար անձանց հսկողությամբ:

Առանց ապրանքների նկատմամբ օրենքով բավարար իրավունք ունեցող անձանց կամ նրանց լիազոր ներկայացուցիչների ներկայության նմուշներ և փորձանմուշներ կարող են վերցվել Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով սահմանված դեպքերում՝ երկու ընթերակայի մասնակցությամբ:

4. Փորձարկման նպատակով ապրանքների նմուշների և փորձանմուշների ընտրանքն իրականացնում են համապատասխան իրավասու մարմինների լիազոր ներկայացուցիչները՝ տվյալ խմբաքանակը բնորոշող նվազագույն բավարար քանակով՝ համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջների:

5. Փորձարկման նպատակով ապրանքներից նմուշներ և փորձանմուշներ վերցնելու ժամանակ կատարվում է ապրանքների նույնականացում:

Նույնականացումն իրականացվում է նմուշառման վայրում:

6. Նմուշներ և փորձանմուշներ վերցնելու ժամանակ կազմվում է վերադաս մաքսային մարմնի կողմից սահմանված ձևի արձանագրություն, որն ստորագրում են մաքսային և նմուշառում իրականացնող մարմինների ներկայացուցիչները, ինչպես նաև ապրանքների նկատմամբ օրենքով բավարար իրավունք ունեցող անձը կամ նրա լիազոր ներկայացուցիչը, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ ընթերակաները:

Արձանագրությունից մեկական օրինակ տրվում է մասնակիցներին:

7. Փորձարկման նպատակով ապրանքներից վերցված նմուշները և փորձանմուշներն առանձնացվում են հիմնական ապրանքից ու տեղափոխվում փորձարկումների նմուշառումն իրականացնող համապատասխան իրավասու մարմինների ներկայացուցիչների կամ ապրանքների նկատմամբ օրենքով բավարար իրավունք ունեցող անձանց, կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից:

8. Քաղաքացիական և ծառայողական զենքի ու դրանց փամփուշտների նմուշների տեղափոխումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Եթե նմուշները տեղափոխում են ապրանքների նկատմամբ օրենքով բավարար իրավունք ունեցող անձինք կամ նրանց լիազոր ներկայացուցիչները, ապա նմուշները կապարակնքվում (դրոշմակնքվում) են մաքսային մարմինների և նմուշառումն իրականացնող համապատասխան իրավասու մարմինների լիազոր ներկայացուցիչների կողմից:

10. Նմուշների և փորձանմուշների փորձարկումների ավարտից հետո փորձարկման գործընթացում օգտագործված նմուշները և փորձանմուշները, ինչպես նաև փորձարկման չենթարկված նմուշները վերադարձվում են օրենքով բավարար իրավունք ունեցող անձին, բացառությամբ այն դեպքերի, երբ կոնկրետ նորմատիվ փաստաթղթերով նախատեսվում է որոշակի ժամկետով տվյալ ապրանքի հսկիչ նմուշի պահպանումը փորձարկման լաբորատորիայում: Այս դեպքում ապրանքների նկատմամբ օրենքով բավարար իրավունք ունեցող անձը կամ նրա լիազոր ներկայացուցիչը կարող է հսկիչ նմուշը հետ վերցնել այդ ժամկետը լրանալուց հետո: